Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
դեկտեմբերի 21-ի նիստի N 53
արձանագրային որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

I. ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ

1. Տարածքային աճի բևեռների զարգացման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) մշակվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից:

II. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2. Հայեցակարգը մշակվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի թիվ 122-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 87-րդ կետով նախատեսված միջոցառման կատարման շրջանակներում:

3. Հայեցակարգի մշակման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի N29 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն):

4. Հայեցակարգը հանդիսանում է տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների համար որպես ուղեցույց՝ տարածքային աճի բևեռների զարգացման, դրանց մեխանիզմների կիրառման և իրագործելիության նպատակով:

5. Հայեցակարգն ապահովում է համապատասխան մեթոդաբանություն, որը հնարավորություն կընձեռի բևեռային քաղաքներում որոշումների կայացման վրա ազդեցություն ունեցող բոլոր կողմերին՝ միասնական մշակելու համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունը և դրանից բխող նպատակային ծրագրերը: Այն ապահովում է համայնքի մրցակցային առավելությունների վրա հիմնված որոշումների ընդունման միասնական գործընթացը:

6. Հայեցակարգում շարադրվում են տարածքային աճի բևեռների անհրաժեշ-տության, դրանց կիրառելիության և հանրապետությունում բևեռային քաղաքների ընտրության չափանիշները և հնարավոր կիրառման մեխանիզմները:

III. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

7. Ցանկացած երկրի կայուն զարգացման գրավականն է համաչափ տարածքային զարգացումը, որը հանդիսանում է երկրի առջև ծառացած տնտեսական և քաղաքական մարտահրավերներին դիմակայելու հզոր նախապայման:

8. ՀՀ 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը նախատեսում է վերոնշյալ նպատակի իրականացում՝ ի հաշիվ մի քանի գերակա նպատակների, որոնցից մեկն է «տարածքային աճի բևեռների» ձևավորումն ու զարգացումը:

9. ՀՀ ներկայիս զարգացման փուլում կենսական անհրաժեշտություն է տարածքային աճի բևեռների ձևավորումը, և այդ հարցում առանցքային դերակատարություն պետք է ունենա պետությունը՝ դրանց համար ձևավորելով հատուկ պայմաններ: Այդ հատուկ պայմանները կարող են ենթադրել ինչպես հատուկ մրցունակ և ներդրումային միջավայրի ձևավորում, այնպես էլ տվյալ տարածաշրջանում իրականացվող նախագծերում պետության անմիջական մասնակցություն պետական ծախսերի և ներդրումների տեսքով:

10. ՀՀ տարածաշրջաններում «տարածքային աճի բևեռների» ձևավորումը և զարգացումը թույլ կտա անցում կատարել միաբևեռ, մայրաքաղաքում կենտրոնացած տնտեսությունից բազմաբևեռ, կայուն, համաչափ զարգացող տնտեսությանը:

11. «Տարածքային աճի բևեռների» ձևավորումը պետք է կայուն տնտեսական կապերով կապված լինի տարածաշրջանի հետ, որպեսզի օգտագործի դրա ռեսուրսները որպես զարգացման իմպուլսներ/ազդակներ և հանդիսանա տարածաշրջանի, երկրի զարգացումն ապահովող և տարբեր սոցիալ-տնտեսական խմբերի շահերը բավարարող միջոց:

IV. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հայեցակարգի հիմնական նպատակն է մշակել տարածքային աճի բևեռների ձևավորման և զարգացման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներ՝ կայուն զարգացող բազմաբևեռ տնտեսության և հավասարաչափ տարածքային զարգացման

ապահովման նպատակով: Հայեցակարգը սահմանում է տարածքային աճի բևեռների ձևավորման սկզբունքները և մեխանիզմները և դրանց կիրառելիությունը:

13. Հայեցակարգի նպատակը բևեռային քաղաքներում տնտեսական բարեկեցության գերազանցության կենտրոնների ստեղծումն ու մրցունակության աճն է, ինչպես նաև բյուջետային կարողությունների ավելացումն ու ենթակառուցվածքների զարգացումը:

14. Սույն հայեցակարգով կարգավորվում է այն քաղաքային բնակավայրերի տնտեսական զարգացման գործընթացը, որոնք բնութագրվում են որպես տարածքային աճի բևեռներ:

V. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ

15. Ներկայումս աշխարհում լայն տարածում ունի տարածքային աճի բևեռների հիմնումը, որի նպատակն է երկրի հավասարաչափ զարգացման ապահովումը:

16. Տարածքային աճի բևեռը (այսուհետև՝ Բևեռներ)՝ դա պետության որոշակի տարածք է, համայնք որտեղ տնտեսության որոշակի ոլորտ երկրի, տարածաշրջանի միջինացված ցուցանիշների համեմատ, կարող է ապահովել ավելի արագացված որակական և քանակական զարգացում՝ աստիճանաբար նոր թափ հաղորդելով երկրի տնտեսության թերզարգացած ոլորտներին, տարածքներին, սուբյեկտներին և շոգեքարշի դեր կատարել դրանց համար:

17. Այս պարագայում կարևորվում է աճի բևեռների հստակ կանխորոշումը՝ տնտեսական աճի առաջնային ու խորքային արդյունք ապահովող կետերը: Ընդ որում, ընտրության և հստակեցման ընթացքում պետք է ընտրվեն այնպիսի առաջնային առավելություններ և առավելագույն արդյունավետություն ապահովող համընթաց գործոններ (տրանսպորտային–լոգիստիկ ենթակառուցվածքներ, էժան հումքի առկայություն, անհրաժեշտ աշխատուժի, այդ թվում նաև՝ մասնագետների առկայություն, առկա և թաքնված բավարար պահանջարկ՝ ներքին շուկայում և այլն), որոնք նվազագույնի կհասցնեն աճի բևեռի տեխնիկական կայացման ժամանակահատվածը:

18. Բևեռների ձևավորումը պայմանավորված է առանցքային ճյուղի զարգացման հնարավորությամբ և համայնքի տնտեսության վրա դրա ազդեցությամբ: Մասնավորապես կոնկրետ ոլորտի զարգացումը շղթայականորեն ապահովում է փոխկապակցված և հարակից ոլորտների աշխուժացում և ազդեցություն ապահովում տնտեսության աճի վրա: Բացի այդ բեևեռներում գործարար ակտիվության մակարդակի բարձրացումը ենթադրում է ներդրումների անընդհատ հոսք և որպես հետևանք

համայնքի և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում: Այդ պարագայում բևեռներին մոտ գտնվող տարածքները ևս ստանում են աճի լրացուցիչ իմպուլսներ:

19. Առաջատար ճյուղերը սովորաբար ունենում են աճի հզոր ներուժ և նորամուծությունների տարածման կարողություն՝ բազմապատկիչի արդյունքով: Զարգացման բարձր տեմպերով ճյուղերը շղթայական ռեակցիա են ստեղծում և նպաստում են արդյունաբերական կենտրոնների ձևավորմանը: Սակայն կան զարգացման բարձր տեմպերով ճյուղեր, որոնք էական ազդեցություն չունեն տնտեսության մնացած ճյուղերի զարգացման վրա, օրինակ՝ սպառողական առարկաների արտադրությունը:

20. Կառուցվածքային առումով՝ բևեռները սկզբում ապահովում են արդյունավետ զարգացում իրենց իսկ սեփական ներքին համակարգերում, ապա դուրս գալով այդ համակարգի սահմաններից, աստիճանաբար, իրենց մեջ ներգրավում են նոր տարածքներ, համակարգեր, ոլորտներ՝ դրանք նույնպես դարձնելով ավելի արդյունավետ և զարգացած:

21. Բևեռային քաղաքներ կարող են ձևավորվել հետևյալ նկատառումներով՝

1) պատմական՝ որևէ տարածաշրջանի պատմական կենտրոնում,

2) վարչական՝ վարչական կենտրոնում,

3) սոցիալ-տնտեսական՝ տնտեսապես զարգացած կենտրոնում,

4) ինովացիոն՝ նորամուծությունների ստեղծման կենտրոնում:

22. Աճի բևեռներում կոնկրետ ոլորտի զարգացումն ի հաշիվ ներքին և արտաքին շուկաների պահանջարկի շղթայականորեն կապահովի փոխկապակցված և հարակից ոլորտների աշխուժացում և կտարածվի ողջ տնտեսության վրա:

23. Բացի այդ, «աճի բևեռներում» գործարար ակտիվության մակարդակի բարձրացումը կնպաստի ներդրումների անընդհատ ներհոսքին, և, որպես հետևանք, կարձանագրվի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում՝ ի հաշիվ գործազրկության և աղքատության նվազեցման:

24. Այն տարածքները, որոնք կգտնվեն աճի բևեռների միջև և կապահովեն տրանսպորտային կապը, ևս կստանան աճի լրացուցիչ իմպուլսներ շնորհիվ բեռնափոխադրումների ավելացման, նորարարությունների տարածման, ենթակառուցվածքների զարգացման և այլն: Տնտեսական աճի բևեռները կունենան նաև անուղղակի արդյունավետություն՝ երկրի ողջ մակարդակով ծնելով կառավարման նոր մշակույթ, նոր գիտական միտք և աճի նոր տեսլական և այդ ամենին հաղորդելով ավելի բարձր ստանդարտներ:

25. Տարածքային աճի բևեռների ընտրությունը պետք է ապահովի երկրի ՀՆԱ-ի փաստացի աճ, որը պետք է գնահատվի հետևյալ ցուցանիշներով.

1) երկրի ՀՆԱ-ում կոնկրետ աճի բևեռների տեսակարար կշիռ,

2) Տնտեսության այլ ճյուղերի վրա դրական մուլտիպլիկատիվ ազդեցություն:

26. Բևեռների զարգացման համակարգը բազմագործոն է: Այն տնտեսական, սոցիալական և բնապահպանական ոլորտների, ինչպես նաև համապատասխան ենթակառուցվածքների ամբողջությունն է:

Գծապատկեր 1. Տնտեսական զարգացման համակարգը բևեռային քաղաքներում

VI. ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

27. Բևեռի ընտրության գործընթացում առաջնային հարց է հանդիսանում բնակչության կյանքի որակի բարձրացման խնդիրը:

28. Բևեռների ընտրության համար հիմք են հանդիսանում քաղաքների հետևյալ ելակետային տվյալները/ինդիկատորները/չափորոշիչները՝

NN	Ոլորտը	Չափորոշիչները
1.	Աշխարհագրական և բնառեսուրսային ներուժը	ա) աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները, բ) վարչական կարգավիճակը գ) ճանապարհային հեռավորությունը մայրաքաղաքից, մարզկենտրոնից, ճանապարհի առկա վիճակը և դրանց հիմնանորոգման և վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը, դ) ջրային, անտառային ռեսուրսների, բնության հուշարձանների, լանդշաֆտային բազմազանության, ինքնատիպ բնություն պետական արգելոցների, բնության հուշարձանների, առողջարանային ռեսուրսների, հանքային աղբյուրների և այլ օգտակար հանածոների, վառելիքաէներգետիկ ռեսուրսների առկայությունը:
2.	Ժողովրդագրական ներուժը	ա) բնակչության թիվը, խտությունը բ) մարդկային ներուժը՝ կրթական, զբաղվածության, աշխատանքային ռեսուրսները
3.	Սոցիալական ներուժը	ա) աղքատության ցածր մակարդակը բ) գործազուրկների թիվը գ) սոցիալապես անապահով ընտանիքների թիվը դ) հանցագործությունների և ահաբեկչության ցածր մակարդակը
4.	Տնտեսական ներուժը	ա) բիզնես միջավայրը և ներդրումային գրավչությունը, բ) զարգացման կայունությունը, գ) ոլորտներ, որոնք առավել հեռանկարային և քիչ ծախսատար են տվյալ տարածաշրջանի համար, դ) արդյունաբերություն և արտադրություն՝ կառուցվածքը, արտադրանքի ծավալները և ներուժը /մշակող արդունաբերու-թյուն՝ սննդամթերք, խմիչք, ծխախոտ, տեքստիլ, փայտ, քիմ.նյութեր, մետաղ, ռետինե և պլաստմասե արտադրություն/ ե) կազմակերպությունները, որոնք տարածաշրջանի ոլորտների համար բազային կամ կայուն գործող են զ) արտահանման ծավալները և դինամիկան, է) ՀՆԱ-ի տարածքային մասնաբաժինները, ը) գերակա ոլորտի արտադրանքի պահանջարկի հեռանկարները ներքին և արտաքին շուկաներում, թ) ծառայությունների ծավալը և որակը, ժ) նոր ստեղծված կազմակերպությունների թիվը և աշխատատեղերի քանակը, ի) ՓՄՁ գործարարության զարգացման միտումները, լ) էքստրեմալ, էկոտուրզմի, ագրոտուրիզմի ձմեռային զբոսաշրջության զարգացման ռեսուրսները:
5.	Համայնքում իրականացված և իրականացվող ծրագրերը՝	ա) ծրագրեր, որոնք իրականացվում են տվյալ տարածաշրջանում և նպատակահարմար են դրա հետագա զարգացման համար, այդ թվում՝ բ) վարկային և դրամաշնորհային, գ) պետական բյուջեի միջոցների հաշվին, դ) համայնքային բյուջեի միջոցների հաշվին, ե) ՊՄԳ գործիքների կիրառմամբ:

6.	Ենթակառուցվածքը	ա) ճանապարհների և տրանսպորտի /երկաթուղի, ավտոմոբիլային՝ վերանորոգված և վերակառուցված/, խելացի տրանսպորտի առկայությունը, բ) ջրամատակարարում և ջրահեռացում, կեղտաջրերի հեռացման և մաքրման համակարգեր, սելավատորներ, դրենաժային համակարգ, գ) էլեկտրա և գազամատակարարման համակարգեր դ) փողոցային լուսավորություն՝ ԷԽ, ե) վերականգնվող էներգետիկայի ներուժ /քամի, արև, երկրաջերմային, կենսազանգվածային, հիդրո/, էներգախնայողություն, զ) տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ,
7.	Առողջապահություն	ա) առողջապահական ենթակառուցվածքի /ԲԿ, ԱԿ, պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ, առողջության պահպանման կենտրոններ/
8.	Գիտություն և կրթություն	ա) ինտելեկտուալ ներուժը բ) ինֆորմացիոն ռեսուրսների առկայությունը, գ) կրթական և գիտահետազոտական կենտրոնների առկայությունը:

VII. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

29. Աճի բևեռների ստեղծումը չպետք է լինի ինքնանպատակ, այն չի կարող կրել դիրեկտիվ բնույթ և պետք է միանշանակ ուղղված լինի տարածաշրջանների կայուն տնտեսական զարգացմանը: Այդ զարգացումը պետք է ապահովի տարածաշրջանի համակողմանի զարգացում՝ ընդգրկելով տնտեսական, սոցիալական, առողջապահական, հումանիտար ոլորտները՝ որպես հիմնական նպատակ ունենալով կյանքի որակի բարձրացումը: Վերոնշյալը պետք է իրականացնել հիմնվելով տվյալ տարածաշրջանի ուրույն կոնցեպտուալ զարգացման վրա:

30. Տարածքային աճի բևեռների ձևավորման սկզբունքներն են.

1) Տարածքային աճի բևեռներում պետության կողմից հատուկ մրցունակ և ներդրումային միջավայրի ձևավորում,

2) Տարածքային աճի բևեռների ընտրության համար սույն հայեցակարգով սահմանվող չափորոշիչներին համապատասխանություն,

3) Տարածքային աճի բևեռների զարգացման համար պետության կողմից հատուկ կարգավիճակի սահմանում,

4) Տարածքային աճի բևեռների ձևավորման գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինների անմիջական մասնակցություն,

5) Տարածքային աճի բևեռների ցանցի աստիճանական ձևավորում:

31. Տարածքային աճի բևեռների ձևավորման և զարգացման գործընթացում պետության դերը չպետք է սահմանափակվի սույն հայեցակարգով սահմանվող չափորոշիչների հիման վրա՝ միայն դրանց ընտրությամբ, այլ ընտրված բևեռներին պետք է տրվի հատուկ կարգավիճակ:

32. Պետությունը պետք է սահմանի արտոնյալ, զարգացման համար նպաստավոր պայմաններ այն ոլորտի համար, որը պետք է լինի բևեռին տնտեսական աճ հաղորդող «միջուկը»: Այդ արտոնյալ պայմանները կարող են սահմանվել ինչպես անժամկետ, այնպես էլ որոշակի ժամկետով:

VIII. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿ

33. Հայաստանն այսօր բնութագրվում է որպես զարգացման մարտահրավերներով, աշխարհաքաղաքական սահմանափակումներով, էներգիայի արտաքին աղբյուրներից ու շուկաներից կախում ունեցող երկիր:

34. Հայաստանի տարածքային զարգացման անհամաչափությունները պայմանավորված են տարածքների բնակլիմայական առանձնահատկություններով, արտադրողական ուժերի ու բնական ռեսուրսների անհամաչափ բաշխմամբ, տնտեսական զարգացման, սոցիալական, ժողովրդագրական ու մշակութային տարբերություններով:

35. Խորհրդային տարիներին Հայաստանի յուրաքանչյուր տարածաշրջան կամ բնակավայր ուներ իր ուրույն դիմագիծը և տեղը երկրի զարգացման գործընթացում: Ավերիչ երկրաշարժը, ծանր պատերազմական տարիները, ոչ ճիշտ մասնավորեցման գործընթացը և տնտեսական կապերի կորուստը բացասաբար անդրադարձան երկրի տնտեսության և, հատկապես, որոշ մարզերի տնտեսությունների վրա:

36. Թեև վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում տարածական տնտեսական քաղաքականության իրականացման համար ստեղծվել են որոշակի նախադրյալներ, մշակվել և կենսագործվում են տարաբնույթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր, տարածքային զարգացման անհամաչափություններն սկսել են խորանալ և հիմնականում արտահայտվում են մայրաքաղաքի տնտեսական դերի և նշանակության աճով, ինչի արդյունքում էլ ավելի է աճել Երևանի և մարզերի միջև կենսամակարդակի ճեղքվածքը:

37. Գյուղական բնակավայրերի մեծ մասը 60% և ավել գտնվում են քաղաքների ազդեցության գոտում և գյուղական բնակչության մեծ մասը բնակվում է Երևանի, Վանաձորի և Գյումրու մերձակա գյուղերում: Իսկ հեռավոր տարածաշրջանների և սահմանամերձ գոտու բնակավայրերը առանձնակի ոլորտային զարգացման կենտրոնների ձևավորման կարիք ունեն:

38. Հանրապետության քաղաքային բնակչությունը կազմում է 1907 հազ. մարդ (հանրապետության բնակչության 63.5 տոկոս), որից ՀՀ մարզերի քաղաքային բնակչությունը կազմում է 833.3 հազ. մարդ:

39. Ներկայումս տնտեսական կառուցվածքում առաջատար դիրքում են ծառայությունների ոլորտը 46.4%, այնուհետև գյուղատնտեսությունը՝ 17,3%, արդյունաբերությունը՝ 16.2%, շինարարությունը՝ 9.5 %:

40. Հանրապետության արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունի մշակող արդյունաբերությունը՝ 61.9%, էլեկտրա- և գազամատակարարումը՝ 18.6%, հանքարդյունաբերությունը՝ 17.9%:

Գծապատկեր 2. Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների 2016 թվականի համար



41. Լեռնահանքային արդյունաբերությունից և գունավոր մետալուրգիայից հետո երկրորդ ճյուղը՝ սննդի արդյունաբերությունն է: Վերամշակող արդյունաբերության մեջ մեծ մասնաբաժին ունեն սննդամթերքի (32.5%) ու խմիչքների (12.5%), ծխախոտի (15.3%) արտադրությունը (թեթև արդյունաբերությունը մետաղագործական, քիմիական, սարքաշինական, դեղագործական, մեքենաշինական, էլեկտրատեխնիկական, ոսկերչություն, ակնագործություն, շինանյութերի արտադրություն):

Գծապատկեր 3. Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների 2016 թվականի համար





Գծապատկեր 4. Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի և մայրաքաղաքի



Գծապատկեր 5. Գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի և մայրաքաղաքի



Գծապատկեր 6. Ծառայությունների ոլորտն ըստ ՀՀ մարզերի և մայրաքաղաքի



42. Ապրանքաշրջանառությունում այսօր ներմուծումը գերազանցում է արտահանմանը: Արտահանման առաջատարներն են հանքահումքը, թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղները և քարերը, սննունդը:

43. Լեռնահանքային արդյունաբերական կենտրոններ են հանդիսանում Ալավերդի, Ախթալա, Կապան, Քաջարան, Ագարակ, Սոթք, Մեղրաձոր, Արարատ, Լիճքվազ համայնքները:

44. Մրցակցային առավելություններով տարածքներ են հանդիսանում մայրաքաղաքը և մոտակա բնակավայրերը, Արարատյան խտաբնակ տարածաշրջանը, Սևանի ռեկրեացիոն գոտին, արդյունաբերական շրջանները, մերձսահմանային տարածքները:

45. Զբոսաշրջության ներուժ ունեն հազարամյակների հարուստ պատմություն ունեցող մշակութային ժառանգության ավելի քան 24000 պատմամշակութային հուշարձանների՝ հատկապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում Հայաստանից 3

անվանակարգերով ընդգրկված հուշարձանների (Հաղպատի և Սանահնի վանական համալիրները (1996 թ., 2000 թ.), Էջմիածնի Մայր տաճարը, եկեղեցիները և Զվարթնոց հնագիտական վայրը (2000թ.), Գեղարդավանքը և Ազատ գետի վերին հովիտը (2000 թ.)) տարածքները:

IX. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

46. Կարևորելով ՀՀ տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների հաղթահարումը, ապահովելով երկրի ներքին սոցիալ-տնտեսական կայունությունը, հետևաբար նպաստելով տնտեսապես թույլ զարգացած տարածքներից բնակչության անցանկալի արտահոսքի կանխարգելմանը, տարածքների համաչափ զարգացումը դիտարկվում է որպես կենսական անհրաժեշտություն:

47. Բազմաթիվ երկրների փորձի ուսումնասիրությունը (Իռլանդիա, Ֆրանսիա, Սլովենիա, Թուրքիա, Չինաստան, Ղազախստան, Բելառուս) փաստում է, որ պետության համար համաչափ տարածքային և, միևնույն ժամանակ, առաջանցիկ տնտեսական զարգացման առավել հաջող տարբերակ է հանդիսանում տարածքային աճի բևեռների ձևավորումը և զարգացումը: Դա հնարավորություն է տալիս գեներացնել տնտեսական բարձր ակտիվություն տարածքային աճի բևեռում, այն տարածել փոխկապակցված ոլորտների և հարակից տարածքների վրա՝ որպես արդյունք արձանագրելով սոցիալ-տնտեսական աճ:

48. Առաջարկվում է ՀՀ տարբեր տարածքներում ձևավորել և զարգացնել տարածքային աճի բևեռներ, որոնք կստեղծվեն ի հակակշիռ Երևանին և կապահովեն կայուն սոցիալ-տնտեսական զարգացում: Նշյալ բևեռները կունենան ուժեղ «գրավման էֆեկտ» և կձևավորեն «զարգացման գոտիներ» տարածաշրջանում և երկրում: Աճի բևեռների ակտիվացումը կնպաստի տարածաշրջանի մրցակցային առավելությունների ստեղծմանը, գործառնական և արտադրական ծախքերի նվազեցմանը՝ ի հաշիվ տարածաշրջանի սուբյեկտների ինտեգրացիայի և ինովացիոն ենթակառուցվածքների զարգացման:

49. Տարածքային աճի բևեռների զարգացման գործընթացում պետության «անմիջական մասնակցության» ապահովման նպատակով առաջարկվում է նշյալ բևեռներում ապահովել պետություն-մասնավոր գործընկերության գործիքակազմը: : Ընդ որում, սա պետք է գործի ինչպես ենթակառուցվածքներում իրականացվող ներդրումների, այնպես էլ բիզնես ներդրումների ոլորտներում: Դա կրկնակի շահեկան կլինի պետության համար, քանի որ մի կողմից պետությունը մասնակից կլինի տարածքային աճի բևեռի զարգացման գործընթացին, մյուս կողմից պետական մասնաբաժնից ստացված եկամուտը կարող է ուղղվել պետության այլ խնդիրների լուծմանը:

50. Առաջարկվում է տարածքային աճի բևեռների ձևավորման գործընթացն իրականացնել փուլային եղանակով, քանի որ մի քանի տարածքային աճի բևեռների միաժամանակյա ձևավորումը կհանգեցնի պետության համար լրացուցիչ պարտավորությունների, գործընթացի

օպերատիվ կառավարման և համապատասխան ֆինանսական ծախսերի և ներդրումների հետ կապված բարդությունների:

51. Համապատասխան տնտեսական էֆեկտի ապահովման դեպքում առաջարկվում է շարունակել տարածքային աճի բևեռների ձևավորումը՝ ստեղծելով տարածքային աճի բևեռների ցանց:

X. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԵՎԵՌՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

52. Առաջարկվում է որպես բևեռներ ընտրել սույն հայեցակարգով սահմանվող չափանիշներին համապատասխան այն համայնքները, որոնք ունեն տնտեսական/ինովացիոն զարգացման ներուժ, կա՛մ ցայտուն արտահայտված լեռնարդյունաբերական, կա՛մ զբոսաշրջային ուղղվածություն:

53. Որպես տարածքային աճի բևեռների հնարավոր տարբերակներ կարող են լինել Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Ջերմուկ, Ալավերդի, Արարատ, Եղեգնաձոր, Արտաշատ, Սևան, Մեծամոր, Քաջարան, Աշտարակ, Ագարակ, Ախթալա, Ծաղկաձոր քաղաքները:

54. Վերոնշյալ համայնքներում նախկին արդյունաբերական տարածքների հետ խնդիրները գրեթե բացակայում են, և որպես կանոն, այդ տարածքները ամբողջովին օգտագործվել են և ներկայումս իրականացվում են նոր շինարարական աշխատանքներ:

55. Տարածքային աճի բևեռներում տնտեսական աճը պայմանավորված է որոշակի ճյուղի առաջանցիկ զարգացմամբ: Որոշ դեպքերում այդ ճյուղը տուրիզմն է, որոշներում՝ հանքարդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը և այլն:

56. Տարածքային աճի բևեռներում տնտեսական զարգացումը մի կողմից պայմանավորված է առանցքային ճյուղի զարգացման հնարավորությամբ և համայնքի տնտեսության վրա դրա ազդեցությամբ, մյուս կողմից՝ անհրաժեշտ է տնտեսական զարգացումը ապահովագրել առանցքային ճյուղի հնարավոր ճգնաժամից:

57. Նշված քաղաքներում անհրաժեշտ է ապահովել տեղական տնտեսական զարգացում, (այսուհետ՝ՏՏԶ) որն իրենից ներկայացնում է մասնակցային գործընթաց՝ նպատակաուղղված ավելի մրցունակ տնտեսության և որակյալ աշխատատեղերի ստեղծմանը:

58. ՏՏԶ- ն ընկալվում է զարգացման երեք հիմնական ուղղություններով՝

1) սոցիալական զարգացում և աղքատության կրճատում,

2) գյուղական տարածքների ինտեգրացված զարգացում բևեռային քաղաքի ազդեցության գոտում,

3) ուղղակի գործարարության զարգացում:

59. Այս նպատակով տնտեսության զարգացման ախտորոշման և պլանավորման ընթացքում ուշադրության կենտրոնում պետք է լինի ինչպես առանցքային ճյուղը, դրա ստեղծած պահանջարկը այլ տնտեսական ոլորտներում, այնպես էլ բևեռային քաղաքների զարգացման այլընտրանքային ճյուղերի բացահայտումն ու զարգացումը:

XI. ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

60. Համայնքի տնտեսության զարգացման բաղադրիչներ են հանդիսանում տեղական տնտեսական զարգացման թիրախները և տեղական մրցունակ գործոնները:

61. Համայնքային տնտեսական զարգացման երեք հիմնական թիրախներն են՝

1) գործող կազմակերպությունները և ֆերմերային տնտեսությունները,

2) սկսնակ կազմակերպությունները և ֆերմերային տնտեսությունները,

3) համայնքից դուրս գործող կազմակերպությունները, որոնց ներգրավումը համայնք կխթանի տնտեսության առկա կամ հեռանկարային ճյուղերի զարգացումը:

62. Առաջնային թիրախը որոշելուց առաջ պետք է հաշվի առնել համայնքի տնտեսության ճյուղերի մրցունակությունը, արտաքին շուկաներում ունեցած դիրքը, ներքին ռեսուրսների վիճակը, և, ամենակարևորը, ընտրված ճյուղերում զբաղված մարդկանց ցանկությունը, ունակությունները և այլ գործոններ: Բևեռային քաղաքներում առաջնային թիրախը առանցքային ճյուղն է, որի շուրջ զարգանում է քաղաքի տնտեսությունը, այդ ճյուղի կողմից ներկայացված այլ արտադրատեսակների պահանջարկը, արժեքային շղթաները և այլն:

63. Գործող կազմակերպությունները կարող են հանդիսանալ համայնքի տնտեսական զարգացման թիրախ, եթե համայնքն ունի արդեն զարգացած և բազմաճյուղ տնտեսություն, համայնքի բնակչության եկամուտների մեծ մասը ուղղակիորեն կախված է առկա կազմակերպություններից, որոնք արդեն ունեն շուկայում կայացած մրցունակություն և հնարավոր աջակցության դեպքում կմեծացնեն ամբողջ համայնքի տնտեսական ներուժը:

64. Բևեռային քաղաքների մեծ մասը զարգանում է լեռնարդյունաբերական ճյուղի զարգացման արդյունքում: Այս դեպքում ՏՏՋ թիրախ կարող են հանդիսանալ այդ ճյուղին սպասարկող, ծառայություններ մատուցող ընկերությունները՝ տեղական տնտեսության մեջ պատվերներ ներկայացնելու ուղղությամբ:

65. Տուրիզմի գծով զարգացող բևեռային քաղաքներում տուրիստական ընկերությունները ամբողջությամբ կարող են հանդիսանալ ՏՏՋ թիրախ՝ ներառելով նաև տուրիստական արժեքային շղթայի մասնակից այլ ճյուղեր և կազմակերպություններ՝ ժամանցի կամ գնումների, ուղևորափոխադրումների կամ առողջապահական ծառայությունների կազմակերպիչներ և այլն:

66. Սկսնակ կազմակերպությունների աջակցության թիրախը ենթադրում է համայնքում տնտեսության զարգացման նոր ուղղությունների խրախուսում կամ առկա ճյուղերում նորարարական մոտեցումների կիրառում: Բևեռային քաղաքներում սկսնակ կազմակերպությունների զարգացումը կարող է պայմանավորվել առանցքային ճյուղի կողմից ներկայացվող պահանջարկը բավարարելու նպատակահարմարությամբ կամ նոր ճյուղերի խրախուսման կարևորությամբ՝ տնտեսական զարգացումը մեկ ճյուղի ճգնաժամից ապահովագրելու համար:

67. Բևեռային քաղաքներում ներդրումների ներգրավումը բնորոշ է այն համայնքներին, որտեղ՝

1) առկա բազմաթիվ արտադրողներին գնորդ կամ մատակարար է հարկավոր,

2) տարածքում առկա հանքերի շահագործումը մեծ ներդրումներ է պահանջում,

3) համայնքում կան բազմաթիվ մասնագետներ նույն ոլորտում (օրինակ՝ տեքստիլ արդյունաբերություն) և այլն:

68. Բևեռային քաղաքների զարգացման վրա էապես ազդեցություն ունեն հետևյալ տեղական գործոնները.՝

1) Շոշափելի տեղական գործոններ հանդիսացող՝

ա. զարգացած ենթակառուցվածքը, որը համայնքում տնտեսական մրցունակությունը բարձրացնելու համար ճանապարհային և տրանսպորտային ցանցը (դեպի համայնք, ներհամայնքային, դեպի բիզնեսի տեղակայման վայր և այլն) էական դերակատարում ունի: Այն մեծ ազդեցություն ունի միայն կազմակերպությունների տրանսպորտային ծախսերի, այլ նաև բնակչության ընդհանուր կենսամակարդակի վրա:

բ. Գազի, ջրի, էլեկտրաէներգիայի, համացանցի , հեռախոսակապի մատակարարումը կազմակերպության համար մյուս կարևոր գործոնների խումբն է: Ենթակառուցվածքների հասանելիություն ու ռեսուրսների որակյալ մատակարարումը ապահովելու համար կազմակերպությունների ներդրումները կտրուկ աճում են:

գ. Որակյալ աշխատուժի առկայությանը՝ կազմակերպության հաջողության առանցքային գործոն է, և, եթե համայնքում կամ մոտակա համայնքներում բացակայում են որակյալ աշխատողներ, ապա բիզնեսը չի կարող մրցունակ լինել: Այս պարագայում կրկին կաճեն ծախսերը՝ որակյալ աշխատուժը համայնք հասցնելու համար: ՏՏՋ համատեքստում ՏԻՄ-երի կարևորագույն գործառույթներից մեկը առանցքային ճյուղի կազմակերպությունների համար ցանցային ենթակառուցվածքների և դրանց մատակարարման որակի ապահովումն է:

2) Ոչ շոշափելի տեղական գործոններ հանդիսացող՝

ա. Համայնքի արդյունավետ կառավարումը: Բացի ենթակառուցվածքների և ռեսուրսների մատակարարումից, կազմակերպությունները նպաստավոր գործարար միջավայրի կարիք ունեն: *ՏԻՄ-երը* ոչ միայն պետք է չխոչընդոտեն առանցքային ճյուղերի զարգացմանը, այլ նաև ստեղծեն գործարարության աջակցության համապատասխան կառույցներ: Համայնքի արդյունավետ կառավարումը ենթադրում է նաև տեղական բյուջետային միջոցների նպատակային օգտագործում, հատկապես՝ առանցքային ճյուղերի կազմակերպությունների համար նպաստավոր միջավայրի կայացման համար:

բ. Կազմակերպությունների մրցունակության վրա էական ազդեցություն ունեն նաև համայնքում առկա *փոխլրացնող բիզնեսները*՝ մատակարարներ, ծառայություններ մատուցողներ, գնորդներ և այլն: Հարակից ճյուղերում ձեռներեցության զարգացման գործիքակազմի կիրառումը աճեցնում է տնտեսական մրցունակությունը:

գ. Զարգացման կայունությունը, որը տնտեսական զարգացումը հանրային բարեկեցության ապահովման ամենաէական գործոնն է: Տնտեսական զարգացման կայունությունը նորարարությունների ստեղծման և կիրառման հսկայական դաշտ է հատկապես փոքր բիզնեսի համար: Այս գերակայությունը ընդլայնում է կազմակերպությունների հնարավորությունները դեպի ավելի արդյունավետ և ապագային միտված ուղղություններ՝ սոցիալական մեծ պատասխանատվությամբ և հաճախորդների ավելի մեծ համակրանքով:

դ. ՏԻՄ- երի կողմից մշակվող ծրագրերում առանձին ուշադրություն պետք է դարձվի ծրագրերի բնապահպանական և սոցիալական կայունությանը՝ մի կողմից որպեսզի ապահովվի բնության հետ համաչափ զարգացումը, մյուս կողմից՝ աջակցության գործիքներ մշակվեն նորարարությունների զարգացման համար:

XII. ԲԵՎԵՌԱՅԻՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

69. Տնտեսական զարգացման ռազմավարության մշակումը ենթադրում է հետևյալ գործողությունները՝

1) <u>զարգացման մասնակցային ախտորոշում</u>: Այս փուլում անհրաժեշտ է վերլուծել տնտեսության առանցքային ճյուղի վիճակը, դինամիկան, դրա կապը համայնքի հետ, ստեղծած զբաղվածությունը, արժեքային շղթան և դրա զարգացման հնարավորությունը և այլն: Արժեքային շղթաների օգնությամբ մասնակցային քննարկումները համայնքում հնարավորություն են տալիս բացահայտել տնտեսության և դրա զարգացման ամբողջական պատկերը:

2) <u>Զարգացման մասնակցային պլանավորում</u>: Այս փուլում համայնքի տնտեսության առանցքային ճյուղերի հիմնական կազմակերպությունները, այլ ճյուղերում ակտիվ անձինք ու կազմակերպությունները, ՏԻՄ- երը, այլ շահագրգիռ կառույցներ ու կազմակերպություններ համատեղ պլանավորում են համայնքի զարգացման ռազմավարությունը՝ շեշտը դնելով մրցակցային առավելությունների, հեռանկարի միասնական ձևակերպման վրա, ինչպես նաև այն նախաձեռնությունների, որոնք, օգտագործելով մրցակցային առավելությունները, նպաստում են հեռանկարի իրականացմանը:

3) <u>Տնտեսական զարգացման ծրագրերի կազմում</u>**:** Մասնակցային պլանավորումից հետո մասնագետները կարող են արդյունքները ձևակերպել քաղաքի տնտեսական զարգացման ռազմավարության տեսքով: Բացահայտված բոլոր նախաձեռնությունները՝ ըստ գերակայության, պետք է դառնան առանձին ծրագրեր ՏԻՄ- երի ու այլ աջակից կազմակերպությունների համար: Տնտեսական զարգացման ծրագրերի հիմքում պետք է մի կողմից լինի տնտեսության տարբեր ճյուղերում առկա կազմակերպությունների հակվածությունը դեպի համագործակցությունը, մյուս կողմից՝ այդ ճյուղերում աշխատանքի արտադրողականությունը, որը վկայում է նաև ճյուղի մրցունակության մասին:

70. Բևեռային քաղաքների զարգացման սույն հայեցակարգի տեսանկյունից ՏՏՋ ծրագրերը կարող են ուղղված լինել՝

1) տնտեսական ենթակառուցվածքների կառուցմանը, վերանորոգմանը, բարելավմանը (օրինակներ՝ ոռոգման ջրագծեր, դեպի առանցքային բիզնեսներ ցանցային ենթակառուցվածքների զարգացում և այլն),

2) տնտեսական ռեսուրսների որակի և հասանելիության ապահովմանը (օրինակ՝ ֆինանսների հասանելիության, աշխատուժի կատարելագործման կամ վերապատրաստման, տեղեկատվության կամ տեխնոլոգիաների հասանելիության ծրագրեր),

3) առանցքային կազմակերպություններին հարակից ճյուղերում (մատակարարներ, ծառայությունների մատուցողներ և այլն) կազմակերպությունների ներգրավմանը, ծառայությունների որակի բարելավմանը (օրինակ՝ համայնքապատկան կազմակերպություններ, առկա կազմակերպությունների ծառայությունների որակի բարելավման ծրագրեր և այլն),

4) սոցիալական ոլորտների զարգացմանը, եթե դրանք ՏՏՋ ռազմավարության հետ են առնչվում և աճեցնում են առանցքային ճյուղերի մրցունակությունը (օրինակ՝ ձեռնարկատիրական և արհեստագործական կրթություն, առողջապահական կամ մշակութային հաստատությունների որակի բարելավում և այլն),

5) բնության պահպանությանը, մաքուր միջավայրին, բնական ռեսուրսների վերարտադրությանը:

71. <u>Տնտեսական զարգացման ծրագրերի իրականացում</u>**:** Բացահայտված ծրագրերի իրականացումը կարող է կազմակերպվել գործարարների, ՏԻՄ-երի, ինչպես նաև հանրային, պետական կամ մասնավոր աջակից կազմակերպությունների կողմից: Անկախ իրականացնողից՝ ՏԻՄ-ը պետք է մշտապես հետևի իրականացվող ծրագրերի ընթացքին՝ հասկանալու համար, թե սահմանված թիրախներից որի՞ն հասան, որտե՞ղ դեռ անելիքներ կան:

72. <u>Տնտեսական զարգացման գործընթացի կազմակերպում</u>**:** ՏՏՋ գործընթացի համակողմանի և միասնական կառավարման համար առաջին քայլը՝ զարգացման հարցում շահագրգիռ բոլոր կողմերի միջև երկխոսության և արդյունավետ հարաբերությունների հաստատումն է:

73. Տնտեսության ախտորոշման և պլանավորման գործընթացը կարող է նախաձեռնվել ինչպես ՏԻՄ- երի, այնպես էլ պետական, հանրային կազմակերպությունների կամ մասնավոր հատվածի կողմից:

74. ՏՏՋ գործընթացում պարտադիր է բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը՝ ՏԻՄ- եր, պետական կառավարման մարմիններ, աջակից հիմնադրամներ և հանրային հատված, և, իհարկե, մասնավոր կազմակերպություններ՝ որպես զարգացման հիմնական թիրախ և դերակատար:

75. Յուրաքանչյուր համայնքում ՏՏՋ ախտորոշման և պլանավորման կարողությունների ստեղծումը հանդիսանում է պետական կառավարման համապատասխան մարմինների առաջնային գործողություններից մեկը:

76. Մշակված ծրագրերի արդյունավետությունը կարելի է գնահատել հետևայլ չափանիշներով:

1) Ծրագրի ուղղակի թիրախը: Այն կազմակերպությունների կամ ֆերմերների նկարագիրը, որոնք ուղղակի շահում են ծրագրի գործողություններից:

2) Ծրագրի ուղղակի թիրախի վրա ազդեցությունը, թիրախի վիճակի փոփոխության նկարագիրը, այդ թվում՝ եկամուտների փոփոխության:

3) Ծրագրի շահառուները: Այն անձանց, կազմակերպությունների, ֆերմերների նկարագիրը, որոնք անուղղակի կշահեն ծրագրի գործողություններից:

4) Ծրագրի իրականացման արդյունքում ծրագրի շահառուների վիճակի փոփոխության (այդ թվում՝ եկամուտների փոփոխության) նկարագիրը:

5) Ծրագրի համապատասխանությունը համայնքի, մարզի, հանրապետության զարգացման ծրագրերին, ոլորտային գերակայություններին:

6) Ծրագրի արդյունքում ստեղծվող սեզոնային և հիմնական աշխատատեղերի քանակը:

7) Ծրագրի հատումը տարածաշրջանային այլ ծրագրերի հետ, հնարավոր սիներգիան, փոխգործակցությունը, կրկնության բացառումը:

8) Համայնքի բյուջեի եկամուտների փոփոխությունը ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում:

9) Որքանո՞վ ծրագիրը կնպաստի համայնքի կայուն տնտեսական զարգացմանը:

10) Որքանո՞վ է ծրագիրը հնարավորություններ է ստեղծում խոցելի խմբերի համար, ծրագրի սոցիալական ազդեցությունը:

11) Ծրագրի ֆինանսական և ինստիտուցիոնալ կենսունակությունը, բնապահպանական ազդեցությունները:

12) Ծրագրի ծախսերի արդյունավետության գնահատումը, ծախսերի և ակնկալվող արդյունքների հարաբերակցությունը:

13) Համաֆինանսավորման մակարդակը համայնքի և մասնավոր հատվածի կողմից:

14) Նորարարությունների կիրառման հնարավորությունը:

15) Որքանո՞վ է ծրագրում հաշվի առնված բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը:

XIII. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ

77. Հայեցակարգի հնարավոր ռիսկերն են.

1) Տարածքային աճի բևեռների (լոկալիզացիայի) սխալ ընտրությունը,

2) Տարածքային աճի բևեռների ուղղվածության (կոնցեպտի) սխալ ընտրությունը,

3) Տարածքային աճի բևեռների զարգացման համար տրամադրվող ֆինանսական միջոցների ոչ նպատակային օգտագործումը:

XIV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

78. Տարածքային աճի բևեռների ձևավորման հայեցակարգի ընդունումը կնպաստի տարածքային աճի բևեռների գրագետ ձևավորմանը և հետևյալ արդյունքների ապահովմանը.

1) աճի բևեռներում կոնկրետ ոլորտի զարգացումը շղթայականորեն կապահովի փոխկապակցված և հարակից ոլորտների աշխուժացում, և տարերայնորեն կտարածվի հարակից տարածքների և ողջ երկրի տնտեսության վրա,

2) նշյալ բևեռներում գործարար ակտիվության մակարդակի բարձրացումը կապահովի տեղական և օտարերկրյա ներդրումների անընդհատ ներհոսք,

3) պետության կողմից տարածքային աճի բևեռներում իրականացնող ուղղակի ներդրումների արդյունքում կբարելավվեն տեղական ենթակառուցվածքները,

4) կարձանագրվի կյանքի որակի և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում՝ ի հաշիվ գործազրկության և աղքատության նվազեցման,

5) կլուծվեն գործառնական և արտադրական ծախքերի նվազեցման խնդիրները՝ ի հաշիվ տարածաշրջանի սուբյեկտների ինտեգրացիայի և ինովացիոն ենթակառուցվածքների զարգացման,

6) տարածքային աճի բևեռների ձևավորումը կնպաստի տարածաշրջանի և երկրի մրցակցային առավելությունների ստեղծմանը:

XV. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

79. Հայեցակարգի դրույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների գնահատականը հնարավոր է տալ հայեցակարգից բխող կոնկրետ ծրագրերի շրջանակներում:

80. Հայեցակարգի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվում է ապահովել համայնքային բյուջեի, միջազգային դոնոր կազմակերպությունների, այդ թվում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Քաղաքների ենթակառուցվածքի և կայուն զարգացման» ծրագրերի և մասնավոր հատվածի միջոցների հաշվին:

XVI. ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

81. Միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ սոցիալ-տնտեսական վերելք ապրած գրեթե բոլոր երկրներն անցել են նույն ուղով՝ ստեղծելով և ապահովելով երկրի առանձին տարածաշրջանների արագացված աճի տեմպեր, ինչը բերել է այդ երկրների կայուն

տնտեսական զարգացմանը: Հաշվի առնելով ՀՀ զարգացման ներկայիս փուլը, տարածքային զարգացման տեմպերը և երկրի առջև դրված ռազմավարական զարգացման նպատակները՝ կենսական անհրաժեշտություն է առաջանում ձեռնարկել քայլեր՝ ակտիվացնելու առանձին տարածաշրջանների տնտեսությունները՝ վերածելով դրանք տարածքային աճի բևեռների: Տարածքային աճի բևեռների ձևավորումը չպետք է կրի զուտ դիրեկտիվային բնույթ: Այն պետք է ուղղված լինի հստակ նպատակների իրականացմանը՝ ապահովելու տնտեսական աճի բարձր տեմպեր տարածքային աճի բևեռի միջուկ հանդիսացող ոլորտում, ինչը տարերայնորեն կտարածվի հարակից ոլորտների և տարածաշրջանների վրա՝ ապահովելով այդ բևեռներում տեղական և արտասահմանյան ներդրումների ներհոսք, սոցիալական ենթակառուցվածքներիի զարգացում բոլոր ուղղություններով (առողջապահություն, սոցիալական ապահովություն, զբաղվածություն, կրթություն, մշակույթ, սպորտ և այլն) և, որպես ցանկալի հետևանք, կյանքի որակի բարձրացում: Տարածքային աճի բևեռների ձևավորումը և զարգացումը պետք է իրականացվի հստակ ձևավորված հայեցակարգային մոտեցումների հիման վրա՝ հիմք ընդունելով տարածքային աճի բևեռի ձևավորման և տարածքային աճի բևեռի գործունեության ուղղվածության սահմանման չափորոշիչները: Տարածքային աճի բևեռների և դրանց զարգացման ուղղվածության սխալ ընտրությունը չի ապահովի ցանկալի տնտեսական էֆեկտ թե՛ տարածաշրջանի, թե՛ երկրի համար: Պետության կողմից տարածքային աճի բևեռներին հատուկ կարգավիճակի շնորհումը և զարգացման համար արտոնյալ պայմանների սահմանումը խթան կհանդիսանա այդ բևեռներում տեղական և օտարերկրյա ներդրումների իրականացման համար: Պետություն-մասնավոր գործընկերություն ձևաչափով իրականացվող ծրագրերը կարող են դառնալ տարածքային աճի բևեռների հեռանկարային զարգացման հիմքը: